Իրավաբանական անձանց ժամկետային ավանդի ամփոփագիր

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վ.Սարգսյան 2 ,
Հեռ.՝ (374 10) 56 11 11; Ֆաքս՝ (374 10) 51 31 33
Էլ. հասցե՝ office@ameriabank.am ; www.ameriabank.am

Ավանդի նվազագույն գումարն է՝ 5,000 ԱՄՆ դոլար

ԱՄՆ դոլար	Տոկոսների վճարման եղանակ		Ավանդների ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի				
			31 –ից 90 օր	91 –ից 180 օր	181-ից 270 օր	271-ից 365 օր	366-ից 730օր
Ամերիա (ստանդարտ) Ավանդ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.80%	2.60%	3.30%	3.80%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.81%	2.63%	3.35%	3.87%
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.90%	2.70%	3.40%	3.90%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.91%	2.73%	3.44%	3.96%
	Տարեկան/տարեկան կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	x	x	x	4.10%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	x	x	x	4.10%
Ավանդի գումարի մինչև 30%-ը ավելացման հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.50%	2.30%	3.00%	3.50%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.51%	2.32%	3.04%	3.56%
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.60%	2.40%	3.10%	3.60%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.61%	2.42%	3.14%	3.65%
	Տարեկան/տարեկան կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	x	x	x	3.80%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	x	x	x	3.80%
Ավանդի գումարի մինչև 30%-ը նվազեցման հնարավորությամբ	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.40%	2.20%	2.90%	3.40%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.41%	2.22%	2.94%	3.45%
	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.50%	2.30%	3.00%	3.50%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.51%	2.32%	3.03%	3.55%
	Տարեկան/տարեկան կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	x	x	x	3.70%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	x	x	x	3.70%
Ավանդի գումարի մինչև 30%-ը	Ամենամսյա/ ամսական տոկոսների կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	x	1.10%	1.90%	2.60%	3.10%
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	x	1.11%	1.92%	2.63%	3.14%

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդի ամփոփագիր

ավելացման և նվազեցման հնարավորությամբ	Եռամսյակային/ եռամսյակային կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	**x**	**1.20%**	**2.00%**	**2.70%**	**3.20%**
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	**x**	**1.21%**	**2.02%**	**2.73%**	**3.24%**
	Տարեկան/տարեկան կապիտալացում	Տարեկան անվանական տոկոսադրույք	**x**	**x**	**x**	**x**	**3.40%**
		Տարեկան տոկոսային եկամտաբերություն	**x**	**x**	**x**	**x**	**3.40%**

****Սույն պայմանները տարածվում են ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներդրվող ավանդների վրա:***

*****Ռեզիդենտ ֆինանսական ընկերությունների (վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ապահովագրական բրոքերներ, ապահովագրական գործակալներ, վճարահաշվարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ, ներդրումային եւ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներ և այլն) ժամկետային ավանդները ներգրավվում են պայմանագրային պայմաններով:***

******Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց ավանդները ներգրավվում են պայմանագրային պայմաններով:***

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ:

2 մլրդ ՀՀ դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավել ավանդների դեպքում՝ պայմանները սահմանվում են համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:

[1]Հաճախորդը չունի ավանդի գումարը ավելացնելու և/կամ նվազեցնելու իրավունք:

[2]Հաճախորդն իրավունք ունի ավելացնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության վերջին 1 ամսվա: Ավանդի գումարը կարող է համալրվել առավելագույնը ավանդի ներդրման պահին ավանդի գումարի 30%-ի չափով:

[3]Հաճախորդն իրավունք ունի նվազեցնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության առաջին 1 ամսվա: Ավանդի գումարը կարող է նվազել առավելագույնը ավանդի գումարի 30%-ի չափով: Վերադարձված մասի նկատմամբ կուտակված տոկոսների վերահաշվարկ չի կատարվում:

[4]Հաճախորդն իրավունք ունի ավելացնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության վերջին 1 ամսվա և նվազեցնել ավանդի գումարը՝ բացառությամբ ավանդային պայմանագրի գործողության առաջին 1 ամսվա: Ավանդի գումարը կարող է ավելացվել և նվազել առավելագույնը ավանդի գումարի 30%-ի չափով: Վերադարձված մասի նկատմամբ կուտակված տոկոսների վերահաշվարկ չի կատարվում:

Ավանդի ներդրման կանոններ

1. Ավանդի ընդունման հիմքը Բանկի և Ավանդատուի միջև կնքված Բանկային ավանդի պայմանագիրն է: Բանկային ավանդի պայմանագրի ձևը գրավոր է:
2. Բանկում ժամկետային ավանդ ներդնող Ավանդատուին Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում՝ նաև բանկային հաշիվ Ավանդի արժույթով: Ժամկետային ավանդ ներդնելիս բանկային հաշվի համար սահմանված նվազագույն մնացորդ, ինչպես նաև սպասարկման (պահպանման) վճարներ չեն պահանջվում:
3. Հաշվից քաղվածքները տրամադրվում են հետևյալ սակագներով.

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդի ամփոփագիր

Քաղվածքի տրամադրման միջնորդավճար	
1. Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	անվճար
2. 1-3 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում[1]	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար
3. Թղթային ձևով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար

4. Կախված գործարք չկատարելու վաղեմությունից հաճախորդի հաշվի պահպանման սակագներ չեն կիրառվում:
5. Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 օր, նահանջ տարվա դեպքում՝ 366 օր:
6. Տոկոսագումարների հաշվարկը իրականացվում է Ավանդի՝ Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև Ավանդը վերադարձնելու օրվան նախորդող օրը:
7. Ավանդային պայմանագրով կարող է նախատեսվել տոկոսների վճարման հետևյալ եղանակներից մեկը՝ ամսական, եռամսյակային, տարեկան և տոկոսների կապիտալացման:
   7.1 Տոկոսների ամսական վճարում՝ տոկոսագումարի այն վճարման ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները ավանդի ներդրման օրվանից հաշված յուրաքանչյուր ամիս հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին:
   7.2 Տոկոսների եռամսյակային վճարում՝ տոկոսագումարի այն վճարման ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները ավանդի ներդրման օրվանից հաշված յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ եռամսյակի վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին:
   7.3 Տոկոսների տարեկան վճարում՝ տոկոսագումարի այն վճարման ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները ավանդի ներդրման օրվանից հաշված տարին մեկ անգամ տարվա վերջին օրը հաշվեգրվում են Ավանդատուի բանկային հաշվին:
   7.4 Տոկոսների կապիտալացում (տոկոսների վճարում ժամկետի վերջում)՝ տոկոսագումարի վճարման այն ձևն է, որի դեպքում ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարները ավանդի ներդրման օրից հաշված յուրաքանչյուր հաջորդ ամսվա՝ ավանդի ներդրման օրը կամ հաջորդող բանկային օրը հաշվեգրվում են ավանդի մայր գումարին, և տոկոսների հաշվարկը շարունակվում է դրանց և ավանդի մայր գումարի հանրագումարի նկատմամբ: Բարդ տոկոսով ներդրված ավանդների պայմանագրի ժամկետը պետք է լինի առնվազն 60 օր:
8. Բանկն իրավունք ունի Ավանդատուին 2 (երկու) օր առաջ գրավոր ծանուցելու կարգով, փոփոխել Ավանդի համար վճարվող տոկոսների չափը:
9. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է բանկային ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով:
10. Բանկը պարտավոր է ավանդը կամ դրա մի մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով:

Սույն պայմաններով սահմանված կարգով, Ավանադատուի առաջին իսկ պահանջով Ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջվելու դեպքում, Բանկը Ավանդատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա եռօրյա ժամկետում կատարում է վերահաշվարկ և վերադարձնում է վերահաշվարկման արդյունքում մնացած Ավանդի գումարը: Այդ դեպքում հաճախորդին վճարվում է տոկոսագումար՝ ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքի փոխարեն տարեկան 0.1% տոկոսադրույքով: Այն դեպքում, երբ ավանդատուին արդեն վճարվել են տոկոսներ, որոնք վերահաշվարկման արդյունքում ենթակա են հետ գանձման, Ավանդի մայր գումարից նվազեցվում են վճարված տոկոսագումարները:

11. Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կարատված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը, պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին Բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում է բանկային հաշվի համար նախատեսված պայմանները:

---

[1] Երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ նյութերի (այդ թվում՝ տեղեկանքների, փաստաթղթերի, դրանց կրկնօրինակների, աուդիտորական հարցման պատասխանների) տրամադրումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Միջնորդավճարը չի գանձվում Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի գործողություններն արտացոլող հաշվից քաղվածքի տրամադրման համար:

12. Եթե Ավանդատուն պայմանագիրը լուծում է ավանդը ներդնելուց հետո 30 օրվա ընթացքում, ապա սույն պայմանների 10-րդ կետում նշված վերահաշվարկից բացի ավանդատուից գանձվում է նաև տույժ՝ 15 000 ՀՀ դրամի չափով: Տույժ չի գանձվում այն դեպքում, երբ ավանդային պայմանագիրը կնքվել է երկարաձգման պայմանով և գործել է մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, որից հետո երկարաձգվել:
13.Ավանդային պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով
14. Հայտարարություն: Ավանդի հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով և տվյալ իրավաբանական անձի ավանդի ավելացման համապատասխան հանձնարարականի հիման վրա:
15.Հայտարարություն: Բանկի կողմից չկան սահմանված սակագներ, որոնք կարող են նվազեցնել տարեկան տոկոսային եկամտաբերությունը:
16.Հայտարարություն: Ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներդրված ավանդները ենթակա չեն հարկման, իսկ ոչ ռեզիդենտ ընկերությունների ներդրված ավանդները հարկվում են 10%-ի չափով:

Օրինակ 1՝ Այն դեպքում, երբ ավանդի գործողության ընթացքում կատարվում է մայր գումարի ավելացում, տոկոսագումարը հաշվարկվում է հետևյալ կերպ

Տոկոսների հաշվարկման եղանակ

Ավանդի գումար՝ 1,000,000.00 ԱՄՆ դոլար
Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01.04.16
Տարեկան անվանական տոկոսադրույք ՝ 2.5%
Գործողության ժամկետ՝ 180 օր
Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝ 01.05.16
Վճարվելիք անվանական տոկոսագումար=1,000,000*2.5/100/365*30=2,054.79
01.05.16ին ավանդի մայր գումարը ավելացել է 50,000.00 ԱՄՆ դոլարով
Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝ 01.06.16
Վճարվելիք անվանական տոկոսագումար=1,050,000*2.5/100/365*31=2,229.45

Օրինակ 2՝ Այն դեպքում, երբ ավանդի գործողության ընթացքում կատարվում է մայր գումարի նվազեցում, տոկոսագումարը հաշվարկվում է հետևյալ կերպ

Տոկոսների հաշվարկման եղանակ

Ավանդի գումար՝ 1,000,000.00 ԱՄՆ դոլար
Ավանդի ներդրման ամսաթիվ՝ 01.04.16
Տարեկան անվանական տոկոսադրույք ՝ 2.4%
Գործողության ժամկետ՝ 180 օր
Տոկոսների վճարման առաջին ամսաթիվ՝ 01.05.16
Վճարվելիք անվանական տոկոսագումար=1,000,000*2.4/100/365*30=1,972.60
01.05.16-ին ավանդի մայր գումարը նվազեցվել է 200,000.00 ԱՄՆ դոլարով
Տոկոսների վճարման երկրորդ ամսաթիվ՝ 01.06.16
Վճարվելիք անվանական տոկոսագումար=800,000*2.4/100/365*31=1,630.68

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդի ամփոփագիր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ; ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ,ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ,ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ; ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՍՏՈՐԵՎ;

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$A=\sum_{n=1}^{N}\frac{K_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}} \qquad (1)$$

որտեղ՝

1) A - ավանդի սկզբնական գումարն է:

2) n -ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

3) N -ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:

4) Kn-ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:

5) Dn- այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, $D_1 = 0$:

Օրինակ «Ժամկետային ավանդ՝ ավանդի ներդրման պահից երեք ամիս հետո տոկոսագումարների վճարմամբ».

Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝

ա. Ավանդի չափ՝ 1 000 000 դրամ

բ. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 կամ 366 օր)

գ. Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 11%

դ. Տոկոսագումարների վճարումները՝ Եռամսյակային կտրվածքով

1) Այս դեպքում կստանանք ավանդի դիմաց տոկոսագումարների վճարումների հետևյալ գրաֆիկը՝

Ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը՝ n	Ավանդի ներդրման օրից մինչև հերթական տոկոսագումարի վճարումն ընկած օրերի թիվը՝ Dn	Վճարվող տոկոսագումարներ	Ներդրված ավանդի գումարի վճարումներ	Ավանդի դիմաց հերթական ընդհանուր վճար՝ Kn
1	90	110 000		110 000
2	**366**		1 000 000	1 000 000
Ընդամենը		110 000	1 000 000	1 110 000

2) Ավանդի ներդրման պահից երեք ամիս հետո վճարվող տոկոսագումարը ստացվում է՝

K_4 = 1000000* 0.11 = 110 000 դրամ

3) Ունենալով բոլոր անհրաժեշտ մեծությունները և օգտվելով թիվ 1 բանաձևից՝ կստանանք տարեկան տոկոսային եկամտաբերության չափը՝

$$1000000=\frac{110000}{(1+APY)^{\frac{90}{365}}}\ldots+\frac{1000000}{(1+APY)^{\frac{365}{365}}},$$ որտեղից

APY=11.46%